

ԲՆԱՊԱՇՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դասախոս,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ինչպես դիցապաշտական շրջան ապրած մյուս ժողովրդները, այնպես էլ հին եգիպտացիները, գտնվելով քաղաքակրթության զարգացման ստորին աստիճանում, շրջապատող իրականության և տեղական ավանդությունների խորն ազդեցությամբ շնչավորել են բնության բազմազան երևույթները, դրանց օժտել են վերանձնային, խորհրդավոր, ավերիչ և արարիչ ուժերով ու հատկություններով: Հին Եգիպտոսում ևս հավաքչությունից ու որսորդությունից մատակցության անցնելիս՝ առանձնահատուկ ուշադրության օբյեկտ է համարվել մեռնող ու հարություն առնող բնության, արեգակի շարժման և շրջափուլերի կապի բացահայտումը: Դրանով իսկ երկնային մարմինների շարժումը սերտ կապի մեջ է դրվել երկրագործության հետ:

Նախապատմական Եգիպտոսի դիցաբանական պարզունակ հավատալիքները փոխանցվել են սերնդե-սերունդ և, համեմատաբար ուշ շրջանում, քրմերի կողմից մշակվել են՝ **ստիլիզացվել**, որոշակի ձևափոխում ապրել և համակարգվել: Եգիպտական միացյալ պետության կայացմանը զուգընթաց այդ պարզունակ հավատալիքները ցեղային պաշտամունքից և առասպելների խայտաբղետ բազմազանությունից վերածվել են **միասնական կրոնական համակարգի**: Եվ չնայած այդ ամենին, պահպանվել են մասնատեղական պաշտամունքները, և գործնականում յուրաքանչյուր քաղաքում շարունակվել է գերազանցապես կենդանակերպ ֆետիշի տեսքով ներկայացվող սեփական հովանավոր աստծու երկրպագումը: Ընդ որում, այդ պաշտամունքներն այնքան կենսունակ են եղել, որ հին հույներն անգամ այդ քաղաքները հաճախ անվանակոչել են համապատասխան կենդանու անվամբ՝ Լիկոպոլիս (աղվես-քաղաք), Լեոնտոպոլիս (առյուծ-քաղաք) և այլն:

Եգիպտագիտությունն անժխտելի է համարում, որ Եգիպտոսի աշխարհագրական միջավայրը՝ բուսական և կենդանական աշխարհը ոչ միայն մեծ դեր է խաղացել Նեղոսի հովտի հնագույն բնակիչների հոգևոր ու հասարակական կյանքում, այլև **իրենով պայմանավորել է համապատասխան կրոնական պատկերացումների գոյավորումը**¹: Կարելի է մասնաշաղկապել, որ «... այլ երկրներից Եգիպտոսի բնական մեկուսացվածությունը առանձնացվածության եսա-

¹ Ջ. Ուիլսոնը աշխարհագրական միջավայրից եգիպտացիների կյանքի կախվածությունը բնորոշող երկու հիմնարար գիծ է համարում «... արեգակի ամենօրյա հաղթական վերածնունդը և գետի (Նեղոսի՝ Գ. Ս.) ամենամյա հաղթական վերածնունդը: Այդ հրաշքերից եգիպտացիները վստահություն ձեռք բերեցին այն բանում, որ Եգիպտոսը տիեզերքի կենտրոնն է և նրանում, որ կյանքը մշտապես հաղթանակ է տանում մահվան նկատմամբ», **Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.** В преддверии философов. М., 1984, с. 49: Եգիպտական դիցաբանի և Եգիպտոսի աշխարհագրական միջավայրի սերտ կապի մասին տես մասն **Ուոլսոն տեղում**, էջ 45-55; **Buck A. A.** Note on Sinuhe // "Jurnal of Egiptian Archeology", Vol. 25, London, June, 1939, pt. 1; **Erman A.** Ägypten und ägyptisches Leben im Altertum. Tübingen, 1923, S. 145-170 և այլն:

կենտրոն զգացմունք է ծնել, որի պայմաններում Եգիպտոսի մտավոր զարգացումն իրականացել է տարբեր տարրերի միախառնությամբ»²: Եվ չնայած այդ միտումներին անառարկելի է մասնաձև, որ **Եգիպտական դիցաբանության արխայիկ** հավատալիքներն աչքի են ընկել ընդգծված տոտեմիստական պատկերացումներով: Այդ պնդումը կարելի է հիմնավորել Եգիպտական դիցապաշտության բազմաթիվ օրինակներով: Այսպես, արխայիկ պաշտամունքային համակարգում ոչխարը համարվել է **Խնում** աստծու ստեղծագործական ուժի, կովը՝ սիրո և գեղեցկության աստվածուհի **Յաթիորի** մարմնավորումը, **Ապիս-ցուլը** համարվել է Մեմֆիսի գլխավոր աստված **Փթաիի** «հոգին և պատգամախոսը», **Մենիս-ցուլը**՝ արեգակնային Ռա աստծու մարմնավորումը (Յելիոպոլիսում), իսկ **Բուիս-ցուլը**՝ տեղական աստծու «կենդանի պատկեր» է համարվել Յերմոնտիսում³:

Դիցաբանության տեսության հանրաճանաչ տեսակետի համաձայն՝ բնապաշտական հավատալիքներն անփոփոխ չեն գոյատևում: Նրանք անցնում են միանգամայն բարդ էվոլյուցիայի ուղի, որի մեխանիզմները, որպես կանոն, պայմանավորվում են ներքին և արտաքին երկու հիմնական գործոններով՝ արտացոլվող առարկայական օբյեկտների աստիճանական փոփոխությամբ և պաշտամունքային այլ համակարգերի հետ ունեցած խաչավորմամբ և սինկրետիզմով: Մ. Թ. ա. III դարից սկսած՝ հելլենականության ազդեցությամբ, ինչպես նաև ներքին և արտաքին այլ ազդեցությունների հետևանքով, Եգիպտոսի մայրաքաղաք և հոգևոր-մշակութային կենտրոն Ալեքսանդրիայի գերագույն աստծու համարում է ձեռք բերել հելլենական ծագում ունեցող **Սերապիսը**, որի խորհրդանշանները նույնացվել են Օսիրիսի և Ապիսի հետ (նախապես անվանվել է Օսարապիս)⁴: Միաժամանակ, մարդակերպացման միտումների ազդեցությամբ մեծ տարածում է ստացել նաև **մարդկային մարմնով և կենդանական գլխով աստվածների** պաշտամունքը: Այդ ճանապարհով են ձևավորվել մարդու մարմնով և ոչխարի գլխով **Խնում**, կոկորդիլոսի գլխով և մարդու մարմնով **Սեբեկ** և այլ աստվածների պաշտամունքները: Ստրաբոնը վկայում է, որ ժամանակի Եգիպտական դիցաբանության մեջ մեծ տարածում է ունեցել նաև **Յորուս** աստծո մարմնավորումը հանդիսացող **արծվի** պաշտամունքը: **Բացված թևերով արծիվը եղել է նաև երկնքի խորհրդանշը և մարմնավորել է փարավոնին**: Ստրաբոնը հավաստում է նաև, որ «գիշատիչ սուրբ թռչնի» պաշտամունքի սրբավայր-տաճարը գտնվել էր Ֆիլե քաղաքում:

Եգիպտական դիցապաշտական համակարգում մեծ ճանաչում է ունեցել նաև

² *Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.* В преддверии философии, с. 48:

³ Մանրամասները տե՛ս История Древнего мира. Кн. 1 / Ранняя древность. М., 1989, с. 292-293; Мифология (Большой энцикл. словарь). М., 1998, с. 52, 453, 586, 592; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, М., 1987, с. 92; Т. 2, М., 1988, с. 345-346, 584-585, 593: Հմմտ.՝ *Море Я.* Во времена Фараонов. М., 1998, с. 119-122; Сказки и повести Древнего Египта. М., 1979, с. 78-79, 108-113; Язычество. Мн., 2006, с. 11-12:

⁴ Այդ մասին տե՛ս Мифология (Большой энцикл. словарь), с. 495; Мифы народов мира (энциклопедия). Т. 2, с. 427:

Իբիս (քաջահավ) **թռչունը**, որը համարվել է իմաստության, գիտելիքի, գրի, ինչպես նաև՝ լուսնի հովանավոր աստվածը, աստվածների քարտուղարը և երկնային դատավորի՝ **Թոթ** աստծու կենդանակերպը։ Նրա պաշտամունքի հետ է կապվել նաև աստծու խոսքի՝ տառերի հայտնագործումը։ Թոթը համարվել է լուսնի հովանավոր աստվածը, իսկ դիցաբանական վաղ շերտում լուսինը համարվել է նաև երևույթների ժամանակային կարգը որոշող չափ, և այդ բոլոր խորհրդանշանները վերագրվել է նաև Իբիսին։ Թոթի պաշտամունքի կենտրոնը Միջին Եգիպտոսի Շմուն (Չերմո) տաճարն էր։ Եգիպտական դիցարանի կենդանակերպ աստվածների համակարգում ուրույն տեղ է գրավել նաև **կատվագլուխ աստվածների պաշտամունքը**։ Այսպես, «Մեռյալների գիրքը» եգիպտական դիցարանի գլխավոր աստվածներից է համարում արևի աստված **Ռաին**, որը պատկերվել է վիթխարի կատվի տեսքով։ Կատվագլուխ է եղել նաև Բուբաստիս քաղաքի գլխավոր աստվածուհին՝ **Քաստետը**, ի պատիվ որի կազմակերպվել են ճոխ տոնակատարություններ։ Գրավոր հուշարձանները վկայում են, որ եգիպտական դիցարանում Չաթհոր աստվածուհին համադրվել է առյուծակերպ աստվածուհի **Սեհմետի** հետ։ Չետաքրքրական է նաև այն, որ վերին և ստորին Եգիպտոսներում պաշտել են առյուծակերպ ավելի քան 32 աստվածների և 33 աստվածուհիների։ Եգիպտական պաշտամունքային համակարգում տարածված է եղել նաև **շնակերպ աստվածների պաշտամունքը**։ Դրանց շարքում ամենաազդեցիկ դեր վերագրվել է մեռյալ հոգիների տիրակալ-աստված **Անուբիսին**, որը խորաքանդակներում պատկերվել է փորի վրա պառկած և գլուխը վեր պահած տեսքով։ Եվս մեկ հետաքրքրական փաստ։ Ստրաբոնը հավաստում է, որ Իբիս թռչունին և կամ կատվին սպանողը, ինչպես նաև դրանց համար հաստատված արգելք-տաբուն խախտողը, անխուսափելիորեն մահապատժի է ենթարկվել⁵։

Եգիպտական դիցաբանության համակարգում յուրահատուկ տեղ է գրավել նաև **օձի պաշտամունքը**, որին գերազանցապես վերագրվել է պաշտպանական գործառնություններ։ Դա է պատճառը, որ իբրև թշնամիներից պաշտպանվելու խորհրդանիշ՝ օձը պատկերվել է նաև փարավոնի գլխազարդի վրա։ Չին եգիպտական պապիրուսներից մեկն ավանդում է չափազանց հետաքրքրական մի դրվագ արևի **Ռա** աստծու, **Իսիդայի** (կնոջ) և **օձի միջև ծավալված պայքարի մասին**։ Իսիդան, որը ձգտում էր նմանվել Ռաին և «տիրել երկրին ու երկնքին», Ռաի բերանից հողի վրա ծորած թքից «իր ձեռքերով կերտում է օձին», որը խայթում է Ռաին։ Գործի դնելով կանացի խորամանկությունները, Իսիդան ձգտում է իմանալ նաև Ռաի գաղտնի պահվող անունը, քանի որ նա, ով հասու է դառնում Ռաի գաղտնի պահվող անվանը, նրա հանդեպ իշխանություն է ձեռք բերում։ Ու թեև Ռան ամենևին էլ չի ցանկանում բացահայտել իր «անվան սրբազան գաղտնիքը», այդուհանդերձ, քանի որ «կենսական ուժերը լքում են նրան», ստիպված է լինում հայտնել իր անունը։ Եվ «մեծ կախարդուհի» Իսիդան Ռաի գաղտնիքը յուրացնելուց հետո իր հմայախոսություններով փրկում է նրան և նրա նկատմամբ

⁵ Մանրամասները տե՛ս Мифология (Большой энцикл. словарь), с. 49-50, 257-258, 418-419, 459, 461, 495; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 89, 568-570; Т. 2, с. 349, 358-360, 423, 427, 429; *Море Я.* Во времена Фараонов, с. 186-188; История Древнего мира. Кн. 1, с. 294:

իշխանություն ձեռք բերում⁶: Եգիպտական կենդանատիպ դիցապաշտական համակարգի կրոնամոգական տեքստերում հաճախ հիշատակվում է նաև **Կարիճը**, որը համարվում է Ռաի դուստր և մեռյալների հովանավոր **Սերկետ** աստվածուհու խորհրդանիշը: Որոշ տեքստեր վկայում են նաև, որ Կարիճի կերպարանքով պատկեր է վերագրվել նաև Իսիդային⁷:

Անապատաբնակ եգիպտացիների երևակայությունը լի է եղել նաև մտացածին կենդանիների գերբնական պատկերներով: Հավանաբար այդ հիման վրա եգիպտական դիցաբանական համակարգերում տեղ է գտել նաև առյուծի մարմնով, թռչնի թևերով և արծվի գլխով պատկերվող **գրիֆոնների** պաշտամունքը: Նեղոսի հովտի հնագույն դիցապաշտների համար գրիֆոնները խորհրդանշել են մարդու համար վտանգավոր և չար ուժերը, որի պատճառով դրանք համարվել են նաև «**խավարի հանձարներ**»⁸: Պաշտամունքային օբյեկտների այս խմբում պետք է դասել նաև առյուծի մարմնով և մարդու, արծվի կամ ոչխարի գլխով պատկերվող **սֆինքսներին**⁹: Պաշտամունքային մեծ տարածում է ունեցել հատկապես 4-րդ դիմաստիայի փարավոն Քեփրենին պատկերող Գիզայի մեծ սֆինքսը: Դատելով պահպանված գրավոր աղբյուրներից՝ դիցապաշտական Եգիպտոսում համեմատաբար թույլ է արտահայտվել **բուսապաշտությունը**: Որոշ աղբյուրներում իբրև պաշտամունքային օբյեկտ հիշատակվում է **փյունիկյան արմավենին**, որը երբեմն նույնացվել է սիրո և գեղեցկության կովագլուխ աստվածուհի Հաթհորի հետ:

Այդ ամենի ընդհանրացմամբ կարել է հանգել այն հետևությանը, որ վաղ շրջանի եգիպտական դիցաբանական համակարգերում առաջատար են հանդիսացել տոտեմիստական պատկերացումները: Կարելի է պնդել նաև, որ տոտեմը համարվել է եգիպտացիների այն խորհրդանիշը, որով նրանք իրենց տարանջատել են օտարներից: Այդ կապակցությամբ հարկ է մատնանշել ընդհանրական ևս մեկ օրինաչափություն: Եթե պատմական զարգացմանը զուգընթաց դիցապաշտազգերի մոտ տոտեմիզմն աստիճանաբար հետին պլան է մղվել, ապա Եգիպտոսում նկատվում է տրամագծորեն հակառակ գործընթաց: Պետության և հասարակական կյանքի զարգացման արդյունքում կենդանապաշտությունն իր ուժը չկորցրեց անգամ հունահռոմեական տիրապետության շրջանում: Վերը նշվածից, սակայն, ամենևին էլ չի հետևում, թե նշված հավատալիքները փոփոխության չեն ենթարկվել: Եգիպտական կրոնի պատմական էվոլյուցիան կարելի է ցույց տալ Սախա քաղաքի հովանավոր **Նեյթ** աստվածուհու պաշտամունքի օրի-

⁶ Այդ մասին տե՛ս История Древнего мира. Кн. 1, с. 296:

⁷ Ֆրանսիացի եգիպտագետ Լեֆեբրն այս առասպելի արժևորման ժամանակ զուգահեռներ է անցկացնում Իսիդայի և Եվայի միջև, քանի որ, նրա համոզմամբ, Եվան ևս օձի օգնությամբ է ձգտել տիրանալ աստվածայինին, հասու լինել բարձրագույն իմաստությանը, տե՛ս **Lefebure G.** Le Cham et L'Adam Egiptienes. Proceedings of Society of Biblical archeology. Paris, 1893, p.87:

⁸ Стéу Мифология (Большой энцикл. словарь), с. 163; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 336:

⁹ Стéу Мифология (Большой энцикл. словарь), с. 519-520; Мифы народов мира (энциклопедия). Т. 2, с. 479-480:

նակով: Նախապես նրա պաշտամունքը նույնացվել է երկնքի հովանավոր աստվածուհու հետ: Հետագայում Նեյթին վերագրվել է պատերազմի և որսորդության հովանավոր աստվածուհու խորհրդանշան և նրան պատկերել են նետն ու աղեղը ձեռքին: Սակայն ուշ շրջանում Նեյթ աստվածուհին համարվել է կանացի արհեստների հովանավոր և նրա խորհրդանշան-ատրիբուտը դարձել է ջուլհակի մաքրքը¹⁰:

Հանրաճանաչ է, որ եգիպտացիների կյանքը շատ բանով կախված է եղել Նեղոսի (Խապի) ջրերի, տիղմի և պտղաբերության հետ: Եգիպտացիները բնական այդ տարրերը պաշտել են իբրև **իգական աստվածություն**: Ցողն ու անձրևը, որոնք հազվագյուտ երևույթ են եղել Եգիպտոսի համար, համարվել են **Ռեֆ-նուտ** աստվածուհու արցունքները: Վաղ շրջանի եգիպտական դիցաբանության համակարգում գերիշխող է եղել այն կարծիքը, որ **արարչական սկիզբը պետք է իգական սկզբնավորում ունենա**: Այդ իսկ պատճառով էլ եգիպտացիները կանացի սկիզբ են վերագրել ոչ միայն հողագործությանը, այլև՝ հոգևոր ու նյութական մշակույթի ծագմանն ու զարգացմանը: Հավանաբար այդ պատճառով է, որ, ինչպես հերոդոտն է վկայում, եգիպտացի կանայք ամենուր պատվավոր տեղ են զբաղեցրել, իսկ նրանց որդիները նախընտրել են կոչվել մոր անվամբ: Այդ տեսանկյունից լիովին հասկանալի է նաև այն, թե ինչու եգիպտական համակարգերում տեղ են գտել այդքան բազմաքանակ կին աստվածներ: Երբեմն երկինքը ևս համարվել է իգական աստվածություն, որն իբր ձեռքերով ու ոտքերով հենվում է երկրի վրա, արևն ու լուսինը նրա աչքերն են, իսկ աստղազարդ երկինքը՝ մարմինը: Ու թեև բազմաթիվ ժողովուրդների դիցաբանության մեջ երկիրը համարվել է իգական սկիզբ, Եգիպտոսում իշխել է հակառակ մտայնությունը:

Այդ ամենով հանդերձ ավելի քան ակնհայտ է, որ դիցաբանական շրջանի եգիպտական կրոնական գիտակցության անկյունաքարը եղել է մոգությունը (հեկաու): Սկզբնաղբյուրները վկայում են, որ մոգական աշխարհըմբռնումը եգիպտական կրոնում մեծ տեղ է զբաղեցրել նաև հետմահու կյանքի պաշտամունքային ըմբռնումներում: Ընդհանրապես Եգիպտոսում մոգությունը դրսևորվել է զանազան ձևերով՝ իբրև նմանակություն, ամբողջը մի մասով փոխարինելու երևակայական սկզբունք, խոսքի հրաշագործ ազդեցությունը կիրառելու ամենատարբեր միջոցների ամբողջություն և այլն: Սկզբնաղբյուրների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ մոգական պրակտիկայի համակարգում եգիպտացիները մեծապես գնահատել են գիտելիքը, գրի և խոսքի իմացության արժեքը: Դրա վկայությունն է «Մերիկարի խրատը» գրական հուշարձանը, որը հրահանգում է «հմուտ լինել ուսման և խոսքի մեջ», քանի որ «**ուժեղ խոսքը ավելի հզոր է, քան՝ ցանկացած զենք**»:

Հին եգիպտացիների պատկերացմամբ աստծու և մարդու անունը խորհրդանշել է նրանց գոյության և էության կարևորագույն տարրը: Դրանով նրանք արդարացրել են շիրմաքարերի վրա կատարվող արձանագրությունները և համարել են, որ գրված անունը ապահովում է հանգուցյալի հավերժական կյանքը: Իսկ թշնամու մեծագույն վրեժ է համարվել հուշաքարի վրայից մահացածի անունը ջն-

¹⁰ Էվոլյուցիոն այդ գործընթացների առանձին կողմերի մասին տես *Море Я.* Во времена Фараонов, с. 191; Язычество, с. 100 և այլն:

ջելը, քանի որ անամուն առարկան համարվել է անգոյ¹¹: Հին Եգիպտոսում մոգության աննախադեպ ծավալումն ունեցել է այլ պատճառներ ևս: Այդ շարքում ամենից առաջ պետք է առանձնացնել **անբավարկության** զգացումը: Դիցապաշտ եգիպտացիները բնական են համարել, որ իր ճակատագրով և կենսակերպով չբավարարվող մարդը փորձել է այն փոխել, շրջել դեպի լավը: Եվ այդ գործընթացում մարդն ամենևին էլ չի սահմանափակվել միայն մարմնի և հոգու «բնական ուժերով», այլ ուժ, խորամանկություն, հրամաններ և այլ միջոցներ բանեցնելով՝ դիմել է գերբնական զորություններին և այդ ճանապարհով փորձել ներգործել ցանկացած առարկայի և էակի վրա: Մոգը թալիսմանների և հմայախոսքի օգնությամբ փորձել է պահել-պահպանել պատահական վտանգներից, ստեղծել «լավագույն ապագա»: Այդ իսկ պատճառով էլ կոնկրետ նպատակներից կախված՝ կիրառվել են խորհրդավոր նշանակություն ունեցող մոգական թալիսմաններ¹²:

Գրավոր հուշարձաններից և պաշտամունքային այլևայլ «ազդեցության միջոցներից» դատելով՝ եգիպտական դիցաբանության մեջ մեծ զարգացում է ապրել նաև **գույների մոգության** ուսմունքը: Դիցապաշտ եգիպտացիները համոզված են եղել, որ **ցանկացած գույն կամ երանգ** «հավիտենականության արտացոլում լինելով»՝ **օժտված է որոշակի ներգործությամբ**: Կանաչ գույնը, օրինակ, համարվել է կենսական ուժի, իսկ սպիտակ գույնը՝ մաքրության խորհրդանիշ և այլն: «Հավիտենականության արտացոլում» հանդիսացող գույների (կանաչ, կարմիր, դեղին, սպիտակ) ներդաշնակությունը նրանք համարել են «հավիտենականության ճանապարհի կարևորագույն տարրեր», որի պատճառով այդ գույները կիրառվել են նմանապատիվ մարմինը համապատասխան փաթաթմաններով պատելու ժամանակ: Այդ ամենին զուգընթաց «գույների ներդաշնակության» պաշտամունքային պատկերացումները սերտորեն կապվել են նաև Անուբիսի պաշտամունքի հետ:

Մոգության միանգամայն այլ տիպ են համարվել վտանգավոր կենդանիների (օձ, կոկորդիլոս, առյուծ, կարիճ և այլն) դեմ ուղղված «կախարդական բանաձևերը»: Այդ ամենին զուգընթաց, կենդանակերպի «առանձնահատկությունների» հիման վրա մոգերը գուշակել են նաև մարդկային ճակատագրերը: Եվ այդ համատեքստում մոգությունը սերտորեն կապվել է աստղագիտական տվյալների վրա: Այս տեսանկյունից տիպական պետք է համարել Դիոդոր Սիկիլիացու այն պնդումը, թե չկա մի այլ երկիր, որտեղ լուսատուների կարգի և շարժման դիտարկման միջոցով երկնականարն ուսումնասիրվել այնպիսի ճշգրտությամբ, ինչպես Եգիպտոսում: Դեռևս հնագույն շրջանում եգիպտացիները զարմանալի ճշգրիտ գիտելիքներ են կուտակել մոլորակների և աշխարհի հարաբերակցության, ինչպես նաև լուսատուների բարենպաստ և անբարենպաստ ազդեցության մասին: Վկայություններից մեկը Ռամզես II փարավոնի հուշադամբարանային համալիրում գտնված շրջանաձև ոսկե մեծ սկավառակն է, որի մակերեսը բա-

¹¹ Հմմտ.՝ История Древнего мира. Кн. 1, с. 296-297:

¹² Եգիպտական մոգության որոշ առանձնահատկությունների մանրամասները տես *Море Я.* Во времена Фараонов, с. 201-225; *Франкфорт Г., Франкфорт Г. А., Уилсон Дж., Якобсен Т.* В преддверии философии, с. 61-62 և այլն:

ժամկած է 365 հավասար մասերի: Ակնհայտորեն յուրաքանչյուր մաս համապատասխանում է մեկ օրվա: Սկահակի վրա ճշգրտորեն պատկերված են նաև լուսատուների դուրս գալը և մայրամուտը, ինչպես նաև արծանագրված են համապատասխան գուշակություններ, որոնք կատարվել են քուրմ աստղագետների կողմից: Լուսատուների դիրքի (դասավորության) այդ յուրահատուկ տարեգրությունը հասարակական կամ անձնական կյանքում տեղ գտած երջանիկ կամ դժբախտ ցանկացած իրադարձություն բացատրել, որոշակի միտվածությամբ և հավանական համանմանության հիման վրա եզրակացրել է, որ նման իրադարձությունը կարող է կրկնվել միայն այն պահին, երբ լուսատուները վերադառնում են նախկին դիրքին:

Հարկ է նանշել, որ այս պարագայում ևս շոշափվում է հավիտենական կյանքի հիմնահարցը: Մասնավորապես նշվել է, որ անվան գրառումը կամ խոսքի արտաբերումը հավասարազոր է կախարդական ծեսին: Ըստ էության դրանով հռչակվել է նաև այն գաղափարը, որ «մեջեցյալի անունը տալը հավասարազոր է նրան կյանքի կոչելուն»: Իսկ դրանից հետևում էր, որ եգիպտացիների համար «անվան արտաբերումը» կամ «խոսքն» ըստ էության նույնացվել է մտավոր կերպարի ստեղծման հետ: Ավելին, աստվածների և մեջեցյալների պաշտամունքում մոգությունը այնքան խորն է ներթափանցել, որ գործնականում չափազանց դժվար է սահմանազատել, թե որն է աղոթքը, որը առ աստված զոհաբերությունը, և որը՝ կախարդությունը: Համարվել է, որ աստծուն պատկերող արծանը կամ դիցը քրմի ձեռքի կամ ձայնի մոգական հատկության շնորհիվ կյանքի էներգիա է ստանում: Այստեղից էլ այն պարզունակ պատկերացումը, թե, իբր քրմի հպման շնորհիվ աստծու դիցը պաշտամունքի ժամանակ դառնում է «արարիչ» և «հաղթող»:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ կարելի է եզրակացնել, որ **Հին Եգիպտոսում պաշտամունքն ամենից առաջ դրսևորվել է իբրև մոգական ուժերի և մոգական ազդեցությունների փոխանակում**, որն իրագործվել է «քրմից դեպի աստված և աստծուց դեպի քուրմ» աստիճանական անցման տեսքով: Եվ այս պարագայում ևս եգիպտական դիցաբանական համակարգերն աչքի են ընկել նախնական կրոնական հավատալիքներին բնորոշ այն առանձնահատկությամբ, թե կախարդությունն ավելի մեծ տեղ է գրավում, քան բուն դիցաբանական հիմնատարը՝ պաշտամունքը: Երբեմն այն տպավորությունն է ստեղծվում, թե այդ համակարգում կախարդությունը սպառնում է անգամ աստվածների պաշտամունքին: Բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ այդ պատկերացումները տեղափոխվել են նաև երկինք, ինչի հետևանքով եգիպտական աստվածները համարվել են նաև «մեծ մոգեր»: Այդ եզրահանգումը կարելի է հիմնավորել հատկապես **Թոթ** աստծու պաշտամունքի օրինակով, որը համարվել է «երկնքի և ձայնի տիրակալ», այնպիսին, «որի առաջ ոչ մի բան կանգուն չի մնում ո՛չ երկնքում, ո՛չ էլ երկրի վրա»: Դա է պատճառը, որ հմայություններ կատարելիս մոգերն արտաբերել են հենց Թոթի գրքի անեծքները:

Մոգության հզորությունը, եգիպտացիների կարծիքով, առավել ցայտուն դրսևորում է ունեցել «հավիտենական կյանք» նվաճելու ժամանակ: Եգիպտական մոր դիցաբանում իշխել է այն համոզմունքը, որ դժոխքի դարպասների մոտ մեջեցյալը պետք է ներկայանա Օսիրիսի դատին: Ընդ որում, նրանք համոզված

են եղել, որ «փրկիչ բանաձևերի», «պահպանիչների» և դատավորների անունների իմացությունը լիովին բավարար պայման է մեղքերից մաքրագործվելու և «հանգուցյալի հաղթանակի» համար: Երկրային կյանքում հանգուցյալը եղել է արդար, թե ոչ, էական չի համարվել: Բավարար է համարվել միայն այն, որ նման ջեցյալը տիրապետի «ստեղծագործ ծայնի շնորհին», պահպանիչ թալիսմաններին և կարողանա կատարել համապատասխան ծեսերը, որպեսզի վստահ լինի, որ օսիրիսյան դատավորները նրան կճանաչեն «բարի»: Ըստ էության մոգական գործողությունն այստեղ ոչ միայն լիովին փոխարինել է բարոյապարկեշտությանը և ազնվությանը, այլև յուրատիպ միջոց է հանդիսացել աստվածներին խաբելու համար:

Չպետք է մոռանալ նաև, որ եգիպտական դիցաբանական պատկերացումների համաձայն մահվանից հետո մարդը չէր կարող կեցություն ունենալ առանց մարմնի: Այդ իսկ պատճառով համարվում էր, որ հանգուցյալի հոգին արձանիկի ձևով պատկերող երկվորյակ Կա-ի պատվին անհրաժեշտաբար պետք է զոհ մատուցվի: Պատկերացում էր ձևավորվել նաև այն մասին, որ իրական զոհաբերությունը միանգամայն ազատ կերպով կարելի էր փոխարինել «համապատասխան բառային բանաձևերով» կամ մաղթանքներով, ինչպես օրինակ, «Կա-ին՝ 1000 ցուլ և թռչուն»¹³: Նաև այն կարծիքն էր իշխում, որ անհավանական հրաշքներն անգամ մոգի համար հնարավոր և իրական էին, քանի որ առանց մեծ ճիգերի մոգերը կարող էին հաղթահարել բազմաթիվ ու բազմապիսի դժվարություններ:

НАТУРАЛИСТИЧЕСКИЕ ВЕРОВАНИЯ ЕГИПТА

Г. А. Саркисян

В египтологии считается неоспоримым, что в период около трех тысячелетий обозримой истории на основе "природного обособления" интеллектуальное развитие Египта складывалось в результате смешения различных элементов, которые обуславливали становление соответствующих религиозных представлений. Поэтому из-за зависимости от географической и социальной среды египетская архаическая мифология выделяется особо развитыми тотемистическими представлениями, которые в форме пережитков сохранялись также в антропологических представлениях.

Так, бог солнца Атум изображался человеком с двойной короной на голове и воплощался также в образе змея, бог солнца Ра почитался в образе сокола, иногда - огромного кота, изображался человеком с головой сокола, воплощенное в соколе божество Гор изображалось в виде сокола или человека с головой сокола, бог-покровитель умерших Ану비스 почитался в виде человека с головой черного шакала (дикий собаки), бог плодородия Апис - в облике быка, грифоны - с орлиным клювом и телом льва и т.д.

¹³ St'u История Древнего мира. Кн. 1, с. 296; Мифология (Большой энцикл. словарь), с. 267; Мифы народов мира (энциклопедия). Т. 1, с. 602:

NATURALISTIC BELIEFS OF EGYPT

G. A. Sarkisyan

In Egyptology is undeniable that in a period of about three millennium recorded history on the basis of “natural separation” intellectual development of Egypt evolved as a result of mixing of different elements that conditioned the formation of the respective religious beliefs. Therefore, because according to the geographical and social environment, Egyptian mythology stands out archaic totemic ideas developed, which persisted in the form of remnants in anthropological representations.

Thus, the sun god Atum was depicted a man with a double crown on his head and incarnated also in the form of a serpent, the sun god Ra was worshiped in the form of a falcon, sometimes - a huge cat, depicted as a man with a head of a falcon, a falcon god incarnate in Horus was depicted as a falcon or a man with head of a falcon, the patron god of the dead Anubis was honored as a man with a head of black jackal (wild dog), the god of fertility in the guise of the bull Apis, griffins - with an eagle's beak, and lion's body, etc.

ԱՇԽԱՐՀԱԿԱՌՈՒՅՑԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԱՆՐԱԿԵՐՏԵՐԸ (ՄՈՂԵԼՆԵՐԸ)

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

*ԵՊՀ Կրոնի պատմության և տեսության ամբիոնի դասախոս,
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Ինչպես փաստական նյութն է վկայում, հին եգիպտացիների կրոնական մտածողությունը ամենահին էլ չի սահմանափակվել միայն հետմահու կյանքի կամ անմահության դիցաբանական պատկերացումներով: Այդ շրջանից մեզ հասած եգիպտական հուշարձանների վերլուծությունը թույլ է տալիս վեր հանել նաև բնիկների դիցաբանական աշխարհայացքը բնութագրող այլ կատեգորիաներ ևս, որոնցում ուրույն տեղ են գրավել աշխարհակառույցի վերաբերյալ պատումներն ու առասպելները: Մեզ հասած ընդոծին դիցաբանական պատումների համեմատական ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել նաև աշխարհակառույցի եգիպտական պատկերացումների մի շարք ընդհանրական օրինաչափություններ:

Այդ ֆոնի վրա առաջին հերթին հարկ է մատնանշել այն իրողությունը, որ աշխարհակառույցի եգիպտական մոդելները նույնպես կառուցվել են դիցաբանական համակարգերը բնութագրող այնպիսի ընդհանրական օրինաչափությունների հիման վրա, ինչպիսիք են դիտարկումից բացատրության անցումը¹, ամենա-

¹ Այդ մոտեցման մանրամասները տես *Ильин В. В., Кармин А. С., Носович Н. В.* Религиозное учение. СПб., 2008, с. 14: